**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 20-ը հունիսի 2016թ
ժամը $12^{45}$

**Մասնակցում էին՝**
Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՀՈՒ թիկունքի վարչության հակահրդեհային տեսչության պետ գնդապետ Հ. Քոչարյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ,ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան,
ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության աուդիտի հաշվետվությունների կատարման վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,
**Գնումները համակարգող՝**
Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյան:

**«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.
2.«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Հանդերձանքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/h | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Վ. Վ. Վ. Գրուպ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2 .«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 Մասնակցի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13 – ՀՀՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Անվանում | Հ/Մ | Քանակ | Նախահաշվային գին | «Վ. Վ. Վ. Գրուպ» ՍՊԸ-ի առաջարկ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԱԱՀ-ով | առանց ԱԱՀ-ի |
| 1 | ԿՓ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում | հատ | 50 | 100,000 | 172,500 | 143,750 |
| 2 | ԿՓ-5 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում | հատ | 50 | 225,000 | 447,000 | 372,500 |
| 3 | ԿՓ-8 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում | հատ | 20 | 130,000 | 281,760 | 234,800 |
| 4 | ԱԿ-2 տեսակի կրակմարիչների վերալիցքավորում և նորոգում | հատ | 80 | 160,000 | 476,160 | 396,800 |

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Վ. Վ. Վ. Գրուպ» ՍՊԸ-ի առաջարկած գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 27.06.2016թ. ժամը $10^{15}$-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի կազմակերպվեցին բանակցություններ: Բանակցությանը ներկայացավ «Վ. Վ. Վ. Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Վարված բանակցությունների արդյունքում մասնակիցը 1-ին չափաբաժնի գինը նվազեցրեց՝ սահմանելով 100,000 /հարյուր հազար/ դրամ, 2-րդ չափաբաժին՝ 225,000 /երկու հայրուր քսանհինգ հազար/ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 130,000 /հարյուր երեսուն հազար/ և 4-րդ չափաբաժին՝ 160,000 /հարյուր վաթսուն հազար/ դրամ:

3.3 Ներկայացված է մասնակցի առաջարկած գները ԱԱՀ-ով և առանց ԱԱՀ-ի:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.**

4.1 **01.07.2016թ.** «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի բոլոր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին «Վ. Վ. Վ. Գրուպ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցն առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերի 7.5 կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

5.1 Մասնակիցներիի կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/13-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/15» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Վ. Գասպարյան |
| Գնահատող՝ | Գ. Ուստյան |
| Գնահատող՝ | Հ. Քոչարյան |
| Գնահատող՝ | Ա. Հակոբյան |
| Գնահատող՝ | Ա. Խաչատրյան |
| Գնահատող՝ | Ա. Մուրադյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |